



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
Պատվիրակություն Հայաստանում  
Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, մայիսի 3, 2016թ.

## **Եվրոպական միության անունից՝ Բարձր ներկայացուցիչ Տեղերիկա Մոգերինիի հայտարարությունը ա.թ. մայիսի 3- ի՝ Մամուլի ազատության համաշխարհային օրվա կապակցությամբ**

Այսօր նշվում է Մամուլի ազատության համաշխարհային օրը: Վինդիուկի *հռչակագրի* 25-ամյակի կապակցությամբ՝ ԵՄ-ն ցանկանում է վկայակոչել հետևյալ սկզբունքը. «Ազատ, անկախ և բազմակարծ մամուլի հաստատումը, պահպանումն ու խթանումը հանդիսանում են հասարակության ներսում ժողովրդավարության հաստատման ու զարգացման, ինչպես նաև պետության տնտեսական զարգացման կարևորագույն հենասյունները»:

Մտքի և արտահայտման ազատության իրավունքը ներառում է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, որպես ժողովրդավարական կառավարման և զարգացման առանցքային բաղադրիչ: Անհրաժեշտ է, որ մարդիք լիարժեք տեղեկացված լինեն, որպեսզի ձևակերպեն իրենց կարծիքը և մասնակցեն իրենց իսկ կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացներում: Խոսքի ազատությունը, միաժամանակ, նպաստում է ավելի լավ կառավարմանը՝ հանրային հարցերի շուրջ թափանցիկության բարձրացման միջոցով և ծառայելով, որպես կառավարություններին հաշվետու դարձնելու գործիք, մասնավորապես այն դեպքերում, երբ տեղեկատվության մատչելիության շնորհիվ բացահայտվում են մարդու իրավունքների խախտումներ կամ կոռուպցիոն դեպքեր:

Տեղեկատվության մատչելիությունը կարող է ծառայել արդարության և փոխհատուցման խթանմանը՝ հատկապես մարդու իրավունքների կոպիտ խախտումների բացահայտմանը հաջորդող փուլերում:

ԵՄ-ն հանձնառու է շարունակել խոսքի և մտքի ազատության պաշտպանությունն ու խթանումը ամբողջ աշխարհում՝ ոչ միայն օֆլայն ռեժիմում, այլ նաև կիբեռտարածքում և տեղեկատվական հաղորդակցման այլ տեխնոլոգիաներով՝

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան  
Այցելուների համար մուտքը Պոռչյան փողոցից  
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95  
[Delegation-Armenia@eeas.europa.eu](mailto:Delegation-Armenia@eeas.europa.eu)  
[http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)

2014 թվականին հաստատված «Օնլայն և օֆլայն եղանակով արտահայտվելու ազատության վերաբերյալ ԵՄ մարդու իրավունքների ուղենիշներին» համահունչ:

Փաստաթուղթը դատապարտում է վերջին շրջանում ավելացող ահաբեկումներն ու բռնության դրսևորումները լրագրողների, մարդու իրավապաշտպանների, լրատվամիջոցների ներկայացուցիչների ու այլ անհատների նկատմամբ աշխարհի տարբեր երկրներում՝ օնլայն և օֆլայն եղանակով ազատ արտահայտվելու իրենց իրավունքի իրացման համար:

Բացահայտ բռնությունից բացի ԵՄ-ն վճռական է՝ պայքարելու ընդդեմ այն օրենքների և պրակտիկայի, որոնց միջոցով հարկադրվում է գրաքննությունը, խրախուսվում են ինքնագրաքննություն կամ որոնց միջոցով նախատեսվում են իրավական պատիժներ, այդ թվում, քրեական, ֆինանսական եւ վարչական պատժամիջոցներ, շուկայական իրավասությունների չարաշահումներ եւ տնտեսական վատ պայմաններ:

ԵՄ-ն վերահաստատում է վճռականությունը՝ աջակցելու և խթանելու մտքի և ազատ արտահայտման իրավունքները, որպես իրավունքներ, որոնք պետք է իրացվեն բոլորի կողմից ամենուր՝ հավասարության, խտրականության բացառման և համընդհանրության սկզբունքով՝ ցանկացած լրատվամիջոցներով, անկախ պետական սահմաններից:

Դա քո իրավունքն է: